Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2025 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Տերյան փող. 74
1.3 Պետական գրանցման համարը	222.160.699243
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2002-06-10
1.5 ՀՎՀՀ-ն	01507028
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10524541
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.anau.am
1.8 Էլեկտրոնային փոստը	rector@anau.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	
ՀՀ ԿԳՄՍ Նախարարություն	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	
Արման Խոջոյան	
Արաքսիա Սվաջյան	
Զարուհի Մաթևոսյան	
Արմենուհի Պողոսյան	
Վարդան Ուռուտյան	
Հայկ Մինասյան	
Աստղիկ Հովեյան	
Վաղիմ Ուզունյան	
Գուրգեն Եղիազարյան	
Աղավարդ Խաչատրյան	
Նունե Սիմոնյան	
Վիկտոր Աբրահամյան	
Սերյոժա Երիցյան	
Արմեն Սոլոմոնյան	
Եսթեր Սահակյան	
Մարտիկ Ղազարյան	
Էդիտա Քասինյան	
Մարիամ Դանիելյան	
Հարություն Պողոսյան	
Լուսինե Գրիգորյան	
4. Կառավարչի անուն, ազգանուն՝	

Հրաչյա Զաքոյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1045	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Բարձրագույն, հետբուհական կրթության նպաստ և կրթաթոշակ	790,939,790
	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում	456,667,525
	Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճար	12,978,500
	Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆին աջակցություն	19,600,000
	Գյուղատնտեսական ռոբոտաշինության և մեխատրոնիկայի ագրարային ճարտարագիտության գերազանցության կենտրոնի ստեղծում ՇԻԳ	11,379,684
	21T-4C 087 Գյուղատնտեսական մշակաբույսերի կաթիլային ոռոգման ռեժիմի և տեխնոլոգիաների ուսումնասիրություն գիտական թեմա	4,200,000
	21T-4C249 Գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային կարգերի վերագնահատման մեթոդիկայի մշակումը և հողային ռենտայի հաշվատումը գիտական թեմա	4,880,000
	21T-1A047 Ուռուցիկ ոչ գծայնությամբ որոշ ինտեգրալ հավասարումներ գիտական թեմա	4,350,000
	21T-1D165 Հետերոցիկլերի ածանցյալների սինթեզը միկրոալիքային / ՄԱ/ և գերձայնային / ԳՁ/ճառագայթման ազդեցության տակ գիտական թեմա	5,250,000
	21T-4C045 Կլիմայի փոփոխության պայմաններում Հայաստանի հանրապետության արիդ և սեմիարիդ տարածաշրջանների բնական կերհանդակների խոցելիության գնահատում և դրանց կառավարման վերաբերյալ միջոցառումների մշակում, գիտական թեմա	5,140,000

	21T-4C050 Սինթետիկ պոլիմերների օգտագործմամբ հացահատիկ բերքատվության բարձրացման միջոցառումների համակարգի մշակում Հայաստանի Հանրապետության անջրդի երկագործության պայմաններում գիտական թեմա	5,050,000
	21AG 4D065 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ ջերմային սթրեսի կարգավորումը ձկների և ընտանի թռչունների մոտ,գիտական թեմա	29,220,000
	22IRF-10 Կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանում, բույսերի կենսաբազմազանության ուսումնասիրության ամբողջական մոտեցում,գիտական թեմա	26,900,000
	21T-4D086 Հայաստանի խաղողի գենետիկական ռեսուրսների ինվիտրո վիրուսազերծ հավաքածուի ստեղծում, գիտական թեմա	5,250,000
	24AA 4A064 Պրոբիոտիկների ազդեցությունը հավերի աղիքային միկրոբիոտիկայի վրա ԴՆԹ-ի մեթիլացումը գիտական թեմա	2,000,000
	Ակունք համայնք, բուսաբուծության աջակցության ծրագիր	6,930,000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	SOAA Օրգանական գյուղատնտ զարգացում Հայաստանում մասնակցային բարձրագույն կրթ և գիտ փոխանակում հանուն զարգացման	14,703,885
	Հայաստանում անտառվերականգնում և կլիմայի փոփոխություն Ֆորակա	25,000,000
	"CONT-0799 ծրագիր Հայաստանի մշակաբույսերի կենսաբազմազանության վերականգնում և ապահով կրկնօրինակում Սվալբարդի համաշխ.սերմերի պահոցում"	8,143,551
	Պարենի համաշխարհային ծրագիր ուղղված գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցման	8,696,620
	Վայհենշտեֆան Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարան	2,033,425
	ԱՖԻՇԵ կանաչ գործարքին միտված ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը Հյաստանում և Ուկրաինայում Կրթությունից դեպի էկոլոգիա	59,035,053
	AWDA Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագիր	27,497,811
	VW AZ 93573 Մեթանոգենեզը սուլֆիդ և նիտրատ պարունակող նստվածքային միջավայրերում	279,000

	Վետֆարմ միջին մասնագիտական կրթության և վերապատրաստման օրինակելի համագործակցություն Հայաստանում պիստակի արտադրության ուղղությամբ աշխարհատարածական մոտեցում Էրազմուս+ ՀԳ2	8,454,330
	ԼԻՍՍ Սովորեք Նորարարեք Վաճառեք Հաջողեք	24,771,234
	Ավստրիայի զարգազման գործակալություն- կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում	3,600,000
	Կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի ծրագիր ,Թիգրին	1,977,690
	ԱՇԲ ԲԱՆԿ- Ավանդից ստացված տոկոսագումար	4,334,055
	ԱՄԻՕ ԲԱՆԿ- տոկոսագումար	1,295,722
	ՎՏԲ Բանկ- տոկոսագումար	57,881
	ԱԿԲԱ Բանկ -Ավանդից ստացված տոկոսագումար	13,975,459
	Գյուղատնտեսական արտադրանքից իրացում	10,219,551
	Ծառայությունների մատուցումից (դասընթացներ,խորհրդատվություններ,լաբորատոր հետազոտություններ)	41,511,763
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Գյուղատնտեսական արտադրանքից իրացում	12,584,331
	Ծառայությունների մատուցումից (դասընթացներ,խորհրդատվություններ,լաբորատոր հետազոտություններ)	52,001,771
	Վճարովի ուսուցումից	993,078,159
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	Առանց շարժիչի հեծանիվ	453,360
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Համակարգիչներ,բազմաֆունկցիոնալ տպիչներ	3,246,488
	Փակվող պահարան լոֆտ ոճի bookshelf	62,000
	Սառնարան Berg	132,500
	Հեմատոլոգիական ավտոմատ անալիզատոր	2,599,200
	Հղի երինջներ մաքրացեղ բարձր գենետիկական հատկանիշներով	9,850,000
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		

11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը
Բարձրագույն, հետբուհական,միջին մասնագիտական,հանրակրթական ,արհեստագործական կրթություն	797,245,495
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում	454,789,245
Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճար	12,978,500
24AA -4A064 Պրոբիոտիկների ազդեցությունը հավերի աղիքային միկրոբիոտիկայի վրա՝ ԴՆԹ-ի մեթիլացումը, գիտական թեմա	400,000
21T-4C 087 Գյուղատնտեսական մշակաբույսերի կաթիլային ոռոգման ռեժիմի և տեխնոլոգիաների ուսումնասիրություն, գիտական թեմա"	5,577,743
21T-4C249 Գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային կարգերի վերագնահատման մեթոդիկայի մշակումը և հողային ռենտայի հաշվատումը, գիտական թեմա	5,588,000
21T-1A047 Ուռուցիկ ոչ գծայնությամբ որոշ ինտեգրալ հավասարումներ, գիտական թեմա	4,371,967
Վայհենշտեֆան Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարան	2,033,425
21T-1D165 Հետերոցիկլերի ածանցյալների սինթեզը միկրոալիքային / ՄԱ/ և գերձայնային / ԳՁ/ճառագայթման ազդեցության տակ, գիտական թեմա	6,578,483
21AG 4D065 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ ջերմային սթրեսի կարգավորումը ձկների և ընտանի թռչունների մոտ,գիտական թեմա	30,145,314
Գիտությունների ազգային ակադեմիա ,լուսավոր երիտասարդների բացահայտումը սոցցանցերի միջոցով	990,000
21T-4C045 Կլիմայի փոփոխության պայմաններում Հայաստանի հանրապետության արիդ և սեմիարիդ տարածաշրջանների բնական կերհանդակների խոցելիության գնահատում և դրանց կառավարման վերաբերյալ միջոցառումների մշակում,գիտական թեմա	5,527,506
Բարձրագույն Որակավորման Հանձնաժողով , ատենախոսության պաշտպանություն	88,000
ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի գրասենյակ ապագան այսօր ,կանանց երիտասարդների և երեխաների հզորացումը Հայաստանում	115,594

22IRF-10 Կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանում,բույսերի կենսաբազմազանության ուսումնասիրության ամբողջական մոտեցում,գիտական թեմա	79,092,423
21T-4D086 Հայաստանի խաղողի գենետիկական ռեսուրսների ինվիտրո վիրուսազերծ հավաքածուի ստեղծում,գիտական թեմա	5,812,768
21T-4C050 Սինթետիկ պոլիմերների օգտագործմամբ հացահատիկի բերքատվության բարձրացման միջոցառումների համակարգի մշակում Հայաստանի Հանրապետության անջրդի երկագործության պայմաններում,գիտական թեմա	6,747,580
Հայաստանում անտառվերականգնում և կլիմայի փոփոխություն Foracca	54,805,850
ՀՀ Ճապոնիայի դեսպանատուն	758,762
AFFISHE՝ կանաչ գործարքին միտված ակվակուլտուրայի և ձկնային տնտեսության կրթության զարգացումը Հյաստանում և Ուկրաինայում Կրթությունից դեպի էկոլոգիա	74,344,452
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամ Tgreen՝ Կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի"	1,445,268
Գյուղատնտեսական ռոբոտաշինության և մեխատրոնիկայի ագրարային ճարտարագիտության գերազանցության կենտրոնի ստեղծում ԾԻԳ	9,918,168
Հայաստանում և Ղրղզստանում աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում միջառարկայական հետբուհական ծրագիր GeoTak	4,477,486
SOAA Օրգանական գյուղատնտ զարգացում Հայաստանում մասնակցային բարձրագույն կրթ և գիտ փոխանակում հանուն զարգացման	31,545,984
Էրազմուս ՀԳ 2 Աջակցություն անգլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումների և գործիքակազմի կիրառման ծրագիր Smarti	3,805,309
CONT-0799 Հայաստանի մշակաբույսերի կենսաբազմազանության վերականգնում և ապահով կրկնօրինակում Սվալբարդի համաշխ.սերմերի պահոցում	6,365,735

VETFarm միջին մասնագիտական կրթության և վերապատրաստման օրինակելի համագործակցություն Հայաստանում պիստակի արտադրության ուղղությամբ աշխարհատարածական մոտեցում Էրազմուս+ ՀԳ2	4,311,915
AWDA Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագիր	23,643,970
Գերմանիայի միջազգային համագործակցություն Հայաստանում շրջնաձև ագրոպարենային մոդելի ներդրում ՀԱԱՀ Բլահովիտ տնտեսությունում	8,560,070
Գիտական ստորաբաժանումների Նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինաջակցություն	26,552,400
Պարենի համաշխարհային ծրագիր ուղղված գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցման	2,932,617
ՀՕՖ քիմական լաբորատորիայի վերանորոգում	2,335,000
Տեխասի A&M համալսարանի աջակցությամբ ագրոռոբոտիկայի կենտրոնի վերանորոգում	5,040,010
LISS Սովորեք - Նորարարեք - Վաճառեք – Հաջողեք	3,483,767
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	2,939,546,649
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	173,797,770

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 28 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

GM CONSULT LLC

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2024թ.-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա եկամտի և ծախսի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Հիմնադրամի նախորդ՝ 2023թ. ֆինանսական հաշվետվությունները աուդիտի է ենթարկել ՊԻ ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս ՍՊ ընկերությունը և իր 20.06.2024թ-ին թվագրված աուդիտորական եզրակացությամբ արտահայտել է չձևափոխված կարծիք:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել

ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներիդրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

«Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամ
Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

1	Անկախ աուդիտորի եզրակացություն
2	Հոգաբարձուների խորհրդի կազմը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
3	Եկամտի և ծախսի մասին հաշվետվություն
4	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
5	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
6	Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
7	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ

«Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամ
Եկամտի և ծախսի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	**Ծնթգ.**	**31.12.2024թ.**	**31.12.2023թ.**
Հասույթ	4	1,111,359	1,232,127
Իրացման ինքնարժեք	7	(754,685)	(931,847)
Համախառն շահույթ		**356,674**	**300,280**
Դրամաշնորհներից եկամուտ	5	1,670,683	1,609,580
Ծրագրերի գծով ծախսեր	8	(1,670,683)	(1,609,580)
Վարչական ծախսեր	9	(414,973)	(475,600)
Այլ եկամուտ	6	90,704	130,785
Այլ ծախսեր	10	(322,220)	(729,347)
Գործառնական արդյունք		**(289,815)**	**(773,882)**
Ֆինանսական եկամուտ	11	19,663	27,824
Այլ ֆինանսական հոդվածներ		1,000	2,667
Արդյունք մինչև հարկումը		**(269,152)**	**(743,391)**
Շահութահարկի գծով (ծախս)/եկամուտ	12	96,566	(9,167)
Տարվա արդյունք		**(172,586)**	**(752,558)**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 26.06.2025թ.

6-25 էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամ

ՌԵԿՏՈՐ՝ **Հ. Զաքոյան**

Փորձագետ հաշվապահ՝ **Լ. Մովսիսյան**

«Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Ծնթգ.	31.12.2024թ.	31.12.2023թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	2,001,480	2,060,277
Ոչ նյութական ակտիվներ	14	3,595	6,096
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար		1,848	-
Հետաձգված հարկային ակտիվներ	15	102,916	5,582
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**2,109,839**	**2,071,955**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	16	208,705	200,503
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17	291,393	357,500
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18	803,471	1,039,033
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**1,303,569**	**1,597,036**
Ընդամենը ակտիվներ		**3,413,408**	**3,668,991**
Ոչ ընթացիկ պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	19	1,578,691	1,556,285
Զուտ ակտիվներ		**1,016,215**	**1,229,228**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20	623,301	465,918
Եկամուտներին վերաբերող շնորհներ	19	195,201	417,560
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**818,502**	**883,478**
Ընդամենը պարտավորություններ		**3,413,408**	**3,668,991**

«Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամ

ՌԵԿՏՈՐ՝ **Հ. Զաքոյան**

Փորձագետ հաշվապահ՝ **Լ. Մովսիսյան**

Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Իրացումից մուտքեր	1,088,196	1,417,627
Նպատակային ծրագրերի ֆինանսավորումից մուտքեր	1,459,513	1,430,645
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(1,662,797)	(1,683,655)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(232,095)	(310,850)
Վճարումներ պետական բյուջե	(518,855)	(602,764)
Այլ ստացված գումարներ	43,072	223,965
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների այլ արտահոսքեր	(274,612)	(138,582)
Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	**(97,578)**	**336,386**
Դրամական միջոցների հոսքեր Ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների վաճառք	254	-
Հիմնական միջոցների ձեռք բերում	(154,232)	(140,453)
Տրամադրված փոխառությունների վերադարձ	-	50,000
Ստացված տոկոսային եկամուտ	19,663	31,038
Ներդրումային գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	**(134,315)**	**(59,415)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(231,893)**	**276,971**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	**1,039,031**	**757,046**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3,667)	5,014
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**803,471**	**1,039,031**

«Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամ

ՌԵԿՏՈՐ՝ **Հ. Զաքոյան**

Փորձագետ հաշվապահ՝ **Լ. Մովսիսյան**

«Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամ
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

	Պահուստային կապիտալ	Կուտակված արդյունք	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	**353,704**	**1,628,082**	**1,981,786**
Ճշգրտումներ	-	-	-
Տարվա արդյունք	-	(752,558)	(752,558)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**353,704**	**875,524**	**1,229,228**
Ճշգրտումներ		(40,427)	(40,427)
Տարվա արդյունք	-	(172,586)	(172,586)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**353,704**	**662,511**	**1,016,215**

«Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամ

ՌԵԿՏՈՐ՝ **Հ. Զաքոյան**

Փորձագետ հաշվապահ՝ **Լ. Մովսիսյան**

«Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամի
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթություններ
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» Հիմնադրամը հիմնադիրների որոշմամբ հիմնադրված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է (պետական գրանցման համարը՝ 222.160. 699243), որն իրականացնում է կրթական,գիտական, փորձագիտական, խորհրդատվական, ուսումնագիտաարտադրական և հրատարակչական գործունեությունները: Համալսարանը «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության «Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն իրավահաջորդն է:

Համալսարանի՝ որպես բարձրագույն ուսումնական հաստատության հիմնական գործունեությունը նպատակաուղղված է ագրարային և հարակից ոլորտների բնագիտական, կենսաբանական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, տնտեսագիտական և այլ ուղղություններով կրթության հիմնարար և կիրառական, գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով և ուսուցման տարբեր ձևերով /առկա,հեռակա, հեռավար դրսեկություն/ օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով

Համալսարանի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է ՝ ի դեմս ՀՀ կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման մարմինը ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարությունն է:

1.2 Համալսարանի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- Գյուղատնտեսության ոլորտի համար բարձր որակավորում ունեցող տարբեր աստիճանների՝ բակալավրի,դիպլոմավորված մասնագետի,մագիստրոսի և հետազոտողի մասնագետների, ինչպես նաև գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը, վերաորակավորումն ու խորհրդատվությունը.

- Բնական, տեխնիկական, տնտեսագիտական,հասարակագիտական և հումանիտար գիտությունների բնագավառներում գիտական, ուսումնական և գիտամեթոդական հետազոտությունների իրականացումը, ագրարային գիտության բազմակողմանի զարգացումը

- Կրթության, գիտության և խորհրդատվության ինտեգրացման հիման վրա ուսուցմանբովանդակության կատարելագործումը, նոր և հեռանկարային մասնագիտությունների համակարգերի մշակումն ու արմատավորումը

- Գիտական մշակումների արդյունքների ներդրումն արտադրության մեջ

1.3 Հիմնադրամի գործունեության հիմնական տեսակները՝

1. Մշակելու և հաստատելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների ու մասնագիտացումների ուսումնական պլաններ և առարկայական ծրագրեր, հրատարակելու ուսումնական գրականություն և ուսումնամեթոդական ձեռնարկներ

2. Շնորհելու համալսարանի պատվավոր կոչումներ, սահմանելու մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրելու համալսարանի հուշամեդալով

3. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կազմակերպելու ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, հայցորդների և սովորողների ընդունելություն և համապատասխան ուսուցում :

4. Անձամբ իրականացնելու ձեռնարկատիրական գործունեության այն տեսակները, որոնք սահմանվում են համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝

- Գյուղատնտեսական բարձրագույն, հանրակրթական, միջին և հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպում
- Գիտահետազոտական աշխատանքների իրականացում
- Անասնաբուժական օգնության կազմակերպում
- Փորձագիտական գործունեության կազմակերպում
- Ուսումնագիտաարտադրական գործունեության ծավալում, գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում և արտադրանքի իրացում
- Համակարգչային տեղեկատվական ծառայությունների մատուցում և համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպմանը

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Տերյան փ.74: Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 01507028:

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,045 մարդ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,044):

Հիմնադրամի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ:

1.4 Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

1) Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը.
2) տնօրենը (այսուհետ՝ ռեկտոր): Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Հոգաբարձուների խորհուրդը ձևավորվում է հիմնադրի, լիազորված մարմնի ներկայացուցիչներից, ինչպես նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներից:

ՀԱԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը 20 է:

- 5-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ,
- 5-ը՝ սովորողների ներկայացուցիչներ,
- 5-ը՝ հիմնադիր ներկայացուցիչներ են՝ առաջադրված ՀՀ վարչապետի կողմից պետական պաշտոն զբաղեցնող անձանցից,
- 5-ը՝ Լիազոր մարմնի կողմից խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ :

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է

հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն: Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերվում է ոչ միայն անհատներին այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով Հայկական դրամը զգալի արժեվորվեց ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից ՀՀ կենտրոնական բանկը ոչ մի միջոց չձեռնարկեց , որպեսզի թուլացնի հայկական ազգային արժույթի դիրքերը:

2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր և տնտեսվարող սուբյեկտների վրա: 2023թ.սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմանդրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

2. Պատրաստման հիմքերը

2.1 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Հաշվետվությունները պատրաստվել են հիմնվելով այն գնահատման վրա, որ հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ

կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ)

«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ)

Գումարային արժեքները կլորացվել են մինչև հազար միավորը:

2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա) 2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Առկա չեն 2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն հրապարակված, սակայն դեռ ուժի մեջ չմտած, նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Հիմնադրամի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

2.5 Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթով գործարքներ

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթից բացի այլ արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կայքում՝ www.cba.am, հրապարակված փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները վերահաշվարկվում են կիրառելով ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքները:

Տարեվերջի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքները կազմում էին 396.56 դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, 413.89 դրամ 1 եվրոյի նկատմամբ, 3,71 դրամ 1 ՌԴ ռուբլու նկատմամբ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 404.79 դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, 447.90 դրամ 1 եվրոյի նկատմամբ, 4.50 դրամ 1 ՌԴ ռուբլու նկատմամբ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերհաշվարկման արդյունքում առաջացած փոխարժեքային տարբերությունները համարվում են իրական արժեքի փոփոխության առանձին տարր և ճանաչվում են շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ոչ դրամային ակտիվների գծով փոխարժեքային տարբերությունները կազմում են ֆինանսական գործիքի գծով ճանաչված ընդհանուր շահույթի կամ վնասի մասը:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցների միավորի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման սկզբնապես գնահատված անխուսափելի ծախսումների գումարը:

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև

Հիմնական միջոցներ	Օգտակար ծառայության ժամկետ	Հաշվարկման մեթոդ
Շենքեր, կառուցվածքներ	20-30 տարի	Գծային
Մեքենա սարքավորումներ	5-8 տարի	Գծային
Տրանսպորտային միջոցներ	8 տարի	Գծային
Արտադրատնտեսական գույք	5-8 տարի	Գծային
Համակարգչային տեխնիկա	1 տարի	Գծային
Մաշվող գրականություն	1-5 տարի	Գծային

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները , որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.4 Ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամն իր ֆինանսական ակտիվները դասակարգում է ներքո ներկայացված կատեգորիաներից մեկով կախված այն նպատակից, որի համար ակտիվը ձեռք է բերվել:

Ամորտիզացված արժեքով չափվող

Այս ակտիվները հիմնականում առաջանում են հաճախորդներին ապրանքների և ծառայությունների մատուցումից (օրինակ 'առևտրային դեբիտորական պարտքեր), ինչպես նաև ներառում են այլ ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել, պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից զուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, և հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցնելով արժեզրկման պահուստը:

Ընթացիկ և ոչ ընթացիկ առևտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Այս գործընթացում գնահատվում է առևտրային դեբիտորական պարտքերի չվճարման հավանականությունը: Այդ հավանականությունը, այնուհետև, բազմապատկվում է կանխատեսվող կորստի գումարի չափով՝ առևտրային դեբիտորական պարտքերի ողջ ժամկետի գծով ակնկալվող կորստի գնահատման նպատակով: Առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքելիության հաստատման դեպքում, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը հաշվանցվում է այդ ակտիվի գծով ձևավորված պահուստի հաշվին:

Կապակցված կողմերից դեբիտորական պարտքերի և կապակցված կողմերին տրամադրված փոխառությունների արժեզրկման պահուստները ճանաչվում են վճարունակության կորուստների ակնկալվող մոդելի հիման վրա: Պահուստի գումարի որոշման մեթոդաբանությունը հիմնված է այն հանգամանքի վրա, թե ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման պահից հետո արդյոք եղել է վճարունակության ռիսկի զգալի աճ: Այն ակտիվների համար, որոնց սկզբնական ճանաչման պահից հետո չի եղել վճարունակության ռիսկի զգալի աճ, ճանաչվում է վճարունակության ռիսկի տասներկու ամսվա ակնկալվող կորուստ՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին: Այն ակտիվների համար, որոնց վճարունակության ռիսկը զգալիորեն աճել է, ճանաչվում է ողջ ժամանակաշրջանի համար վճարունակության ռիսկի ակնկալվող կորուստ՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, ինչպես նաև դրամական միջոցները և դրանց համարժեքները: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում, այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումներ, որոնց մարման սկզբնական ժամկետը չի գերազանցում երեք ամիսը, ինչպես նաև

դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ բանկային օվերդրաֆտները: Բանկային օվերդրաֆտները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են ընթացիկ պարտավորություններում վարկերի և փոխառությունների ներքո:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է երկու կատեգորիայի՝ պարտավորության ձեռքբերման նպատակին համապատասխան:

Ստորև ներկայացված է Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվեկշռի ամսաթվին առկա յուրաքանչյուր կատեգորիայի համար, բացառությամբ հեջավորման պայմանը բավարարող ֆինանսական պարտավորությունների:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են հետևյալը՝

- Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած դրանց ստացմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Ժամանակաշրջանի տոկոսային ծախսերը հաստատուն դրույքով ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության պարտավորություններ հոդվածում: Յուրաքանչյուր ֆինանսական պարտավորության նպատակներից ելնելով՝ տոկոսային ծախսերը ներառում են սկզբնական գործարքային ծախսերը, ետգնման վճարները, ինչպես նաև պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները կամ արժեկտրոնները:

- Առևտրային կրեդիտորական և այլ կարճաժամկետ դրամային պարտավորությունները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսային մեթոդը, եթե վերջինս էականորեն տարբերվում է սկզբնական արժեքից:

3.5 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները մարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը ներդրումները դասակարգում է, որպես դրամական միջոցների համարժեքներ միայն այն դեպքում , եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.6 Շնորհներ

Շնորհները, որոնք որոշակի պայմանով տրվում են Հիմնադրամին՝ կանոնադրական գործունեության իրականացման նպատակով, ճանաչվում են իրենց իրական արժեքով , երբ կա հիմնավորված երաշխիք, որ

- Հիմնադրամը կատարելու է դրամաշնորհներին հարակից պայմանները, և
- Դրամաշնորհները ստացվելու են:

Ստացված շնորհները, որոնց փոխանցման հետ կապված չեն գործում որևէ պայմաններ, ճանաչվում են որպես եկամուտ, երբ դառնում են ստացման ենթակա:

Հիմնական միջոցների ձեռքբերմանը վերաբերվող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ծախսերին վերաբերվող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են այն ծախսերը, որոնց համար ստացվել են:

3.7 Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի միջին կշռված արժեքի բանաձևը:

3.8 Պահուստներ

Հիմնադրամը ճանաչել է ժամկետի կամ գումարի առումով անորոշ պահուստներ: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Զեղչման դրույքը պետք է լինի այն դրույքն՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

3.9 Հարկեր

Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է, որը հաշվարկվում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա՝ հաշվի առնելով ՀՀ հարկային օրենսգրքի նախատեսված առանձնահատկությունները:

Շահութահարկի հաշվարկման իմաստով հարկատուի շահույթը համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

3.10 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի

3.11 Եկամուտ

Հիմնադրամի եկամուտները գոյանում են ուսման վարձերից, սեփական գյուղատնտեսական արտադրանքի իրացումից և այլ ծառայությունների մատուցումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել այդ եկամուտը, թե ոչ, Հիմնադրամն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Հաճախորդի հետ պայմանագրի բացահայտում

2. Կատարման պարտականությունների բացահայտում

3. Գործարքի գնի որոշում

4. Կատարման պարտականությունների միջև գործարքի գնի բաշխում

5. Եկամտի Ճանաչում, երբ կատարման պարտականությունները բավարարված են

Շնորհներից եկամուտ

Այս եկամտի ճանաչման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.6-ում:

4. Հասույթ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ուսման վարձերից	999,648	1,170,432
Գյուղատնտեսական արտադրանքի իրացումից	23,057	24,359
Ծառայությունների մատուցումից	88,654	37,336
Ընդամենը	**1,111,359**	**1,232,127**

Ուսման վարձերի գծով հասույթը ճանաչվում է ուսումնական տարվա ընթացքում՝ համամասնորեն բաշխվելով ըստ ամիսների:

5. Նպատակային ծրագրերի ֆինանսավորումից հասույթ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
ՀՀ ԿԳՆ կողմից ֆինանսավորվող կրթական ծրագրերից	789,601	684,945
ՀՀ ԳՊԿ կողմից ֆինանսավորվող գիտական ծրագրերից	553,770	582,064
Այլ դրամաշնորհային ծրագրերից	198,911	228,945
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	128,401	113,626
Ընդամենը	**1,670,683**	**1,609,580**

6. Այլ եկամուտ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Առարկայական տարբերություններ, բացակայություններ և նմանատիպ այլ վճարներ	24,440	53,266
Հանգստի կազմակերպումից եկամուտներ	5,973	34,497
Ուսումնական գործընթացին առնչվող վճարներ	764	2,799
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	806	1,067
Վարձավճարներից եկամուտ	3,157	3,157
Այլ ծառայությունների մատուցումից եկամուտ	10,123	8,817
Անհուսալի պարտքերի դուրսգրումից եկամուտ	40,973	-
Այլ եկամուտներ	4,468	27,182
Ընդամենը	**90,704**	**130,785**

7. Իրացման ինքնարժեք

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	(691,365)	(914,841)
Գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեք	(63,320)	(17,006)
	(754,685)	(931,847)

8. Ծրագրերի գծով ծախսեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
ՀՀ ԿԳՆ կողմից ֆինանսավորվող կրթական ծրագրերից	(789,601)	(684,945)
ՀՀ ԳՊԿ կողմից ֆինանսավորվող գիտական ծրագրերից	(553,770)	(582,064)
Այլ դրամաշնորհային ծրագրերից	(198,911)	(228,945)
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	(128,401)	(113,626)
Ընդամենը	**(1,670,683)**	**(1,609,580)**

9. Վարչական ծախսեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Աշխատանքի վարձատրության ծախս	(101,739)	(101,739)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախս	(98,425)	(98,425)
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(123,372)	(217,746)
Նյութերի ծախս	-	(93)
Գործուղման ծախսեր	(33,054)	(3,307)
Կապի և սպասարկման ծախսեր	(8,809)	(8,330)
Խորհրդատվական ծառայություններ	(10,370)	(9,318)
Վարչական այլ ծախսեր	(39,204)	(36,642)
Ընդամենը	**(414,973)**	**(475,600)**

10. Այլ ծախսեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ուսման վարձի զեղչ և անվանական կրթաթոշակ	(14,338)	(13,191)
Ուսման վարձի փոխհատուցում	(76,810)	(97,252)
Դեբիտորական պարտքի դուրսգրում /ուսման վարձի գծով	(2,353)	(23,064)
Տրանսպորտային ծախսի փոխհատուցում	(15,275)	-
Կրթաթոշակ	(187,961)	
ՀՄ օտարում	(1,226)	(2,087)
Նյութերի ծախս	(1,200)	(747)
Պահուստների գծով ծախսեր	-	(583,081)
Այլ ծախսեր	(23,057)	(9,925)
Ընդամենը	**(322,220)**	**(729,347)**

11. Ֆինանսական եկամուտ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ ներդրված ավանդներից	16,820	27,824
Տոկոսային եկամուտ բանկային մնացորդներից	2,843	-
Ընդամենը	**19,663**	**27,824**

12. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախս / (փոխհատուցում)

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	(768)	(14,749)
Հետաձգված հարկ	97,334	5,582
	96,566	**(9,167)**

Հաշվետու տարվա համար ՀՀ հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2023թ.՝ 18%): Ընթացիկ տարվա շահութահարկը և հետաձգված հարկը հաշվարկվել է 18% տոկոսադրույքով:

Հարկային դրույքի համադրում

	2024թ. հազ. դրամ	2024թ. Արդյունավետ հարկային դրույքաչափ %	2023թ. հազ. դրամ	2023թ. Արդյունավետ հարկային դրույքաչափ %
Շահույթ (վնաս) հարկումից առաջ	**(309,579)**		**(743,391)**	
Շահութահարկ	(55,724)	(18.0)	(133,810)	(18.0)
Հարկային նպատակով չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)՝ զուտ	(40,842)	(13.2)	142,977	19.2
Ընդամենը հարկային ծախս (փոխհատուցում)	**(96,566)**	**(31.1)**	**9,167**	**1.2**

Հայաստանի Հանրապետությունում ՖՀՄՍ-ի և հարկային օրենսդրության միջև տարբերությունները հանգեցնում են ֆինանսական հաշվետվության նպատակներով ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և դրանց հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերությունների:

ՀՀ հարկային օրենսքրքի 123-րդ հոդվածի համաձայն հաշվետու և նախորդ տարիներին առաջացած հարկային վնասները տեղափոխվում են վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ:

13. Հիմնական միջոցներ

	Շենքեր և շինություններ	Հող	Մեքենաներ, սարքավորումներ և այլ գույք	Կենսաբանական ակտիվներ	Օգտագործման համար ոչ մատչելի ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական						
Մնացորդն առ 01.01.2023թ.	**1,538,775**	**190,550**	**2,262,150**	**157,366**	**253,791**	**4,402,632**
Ներքին շարժ	334,787	-	168,757	-	(503,544)	-
Ավելացումներ	15,922	68,419	-	7,924	592,058	684,323
Օտարում, դուրսգրում	(1,800)		(5,756)	(2,017)	-	(9,573)
Մնացորդն առ 31.12.2023թ.	**1,887,684**	**258,969**	**2,425,151**	**163,273**	**342,305**	**5,077,382**
Ներքին շարժ	399,664	-	(43,955)	(98,999)	(256,710)	-
Ավելացումներ	24,545	-	4,136	-	152,979	181,660
Դուրսգրում	-	-	(171,638)	(4,910)	-	(176,548)
Մնացորդն առ 31.12.2024թ.	**2,311,893**	**258,969**	**2,213,694**	**59,364**	**238,574**	**5,082,494**
Կուտակված մաշվածություն						
Մնացորդն առ 01.01.2023թ.	**1,011,344**	**-**	**1,670,348**	**99,348**	**40,139**	**2,821,179**
Ներքին շարժ	-	-	-	-	-	-
Տարվա ծախս	84,479	-	112,328	6,675	-	203,482
Օտարումներ/Դուրսգրումներ	(1,800)	-	(5,756)	-	-	(7,556)
Մնացորդն առ 31.12.2023թ.	**1,094,023**	**-**	**1,776,920**	**106,023**	**40,139**	**3,017,105**
Ներքին շարժ	164,022	-	(24,536)	(99,347)	(40,139)	-
Տարվա ծախս	111,957	-	126,469	-	-	238,426
Օտարումներ/Դուրսգրումներ	-	-	(171,004)	(3,513)	-	(174,517)
Մնացորդն առ 31.12.2024թ.	**1,370,002**	**-**	**1,707,849**	**3,163**	**-**	**3,081,014**
Զուտ հաշվեկշռային արժեք						
Մնացորդն առ 31.12.2023թ.	**793,661**	**258,969**	**648,231**	**57,250**	**302,166**	**2,060,277**
Մնացորդն առ 31.12.2024թ.	**941,891**	**258,969**	**505,845**	**56,201**	**238,574**	**2,001,480**

ման միջոցները ներառում են անհատույց ստացված սարքավորումներ և այլ գույք:
ծության ծախսը վերագրվում է ինքնարժեքին, վարչական և այլ ծախսերին:
գրամի գույքը գրավադրված չէ:

14. Ոչ նյութական ակտիվներ

	2024թ.	2023թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Համակարգչային ծրագիր	3,595	6,096
	3,595	**6,096**

15. Հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	**5,582**	**6,905**
Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս/(փոխհատուցում) (տե՛ս Ծնթ. 12)	97,334	(1,323)
Ճանաչված ծախս/(փոխհատուցում)		
Տարեվերջի մնացորդ	**102,916**	**5,582**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	2024թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	97,079	97,079
Արձակուրդի պահուստ	5,582	196	5,778
Այլ	-	59	59
	5,582	**97,334**	**102,916**
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-
Զուտ արդյունք-հետաձգված հարկային ակտիվներ	**5,582**	**97,334**	**102,816**

	2023թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2023թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	-	-
Արձակուրդի պահուստ	6,905	(1,323)	5,582
Այլ	-	-	-
	6,905	**(1,323)**	**5,582**
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-
Զուտ արդյունք-հետաձգված հարկային ակտիվներ	**6,905**	**(1,323)**	**5,582**

16. Պաշարներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Հումք և նյութեր	142,045	141,789
Աճեցվող և բտվող կենդանիներ	17,843	8,550
Անավարտ արտադրություն	22,361	25,787
Գյուղատնտեսական արտադրանք	22,282	24,377
Այլ	4,174	
Ընդամենը՝	**208,705**	**200,503**

Գյուղատնտեսական արտադրանքը ստացվում է սեփական գիտափորձնական աշխատանքների արդյունքում:

17. Դեբիտորական պարտքեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ուս. Վճարների գծով դեբիտորական պարտքեր	666,650	699,968
Հանած՝ չհավաքագրված ուսման վարձերի պարտքերի գծով պահուստը	(533,259)	(579,231)
Առևտրային դեբիտորական պարտքեր	27,080	42,314
Հանած՝ առևտրային դեբիտորական պարտքերի գծով պահուստը	(6,063)	(6,063)
Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	**154,408**	**156,988**
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափով ֆինանսական ակտիվներ	**154,408**	**156,988**
Տրված կանխավճարներ (ա)	53,891	74,216
Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	83,082	125,594
Այլ դեբիտորական պարտքեր	12	702
Ընդամենը՝	**291,393**	**357,500**

18. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Կանխիկ միջոցներ	5,908	6,529
Դրամային հաշիվ	637,222	771,615
Արտարժույթային հաշիվ	35,341	84,499
Դրամային ավանդ*	125,000	176,390
Ընդամենը դրամական միջոցներ	**803,471**	**1,039,033**

*2024թ.-ի ապրիլի 15-ի թիվ 1590047232 պայմանագրով,կարճաժամկետ ավանդ է ներդրվել ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ-ում տարեկան 8.2% տոկոսային եկամտաբերությամբ՝ 125,000 հազ.դրամ գումար, ավանդի վերադարձման ժամկետ 15.04.2025թ:

19. Ակտիվներին վերաբերվող շնորհներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	**1,556,285**	**1,018,622**
Ներքին շարժ	-	(3,133)
Շնորհի վերադարձ	-	(99)
Ավելացումներ	150,807	654,521
Ճանաչված եկամուտ	(128,401)	(113,626)
Տարեվերջի մնացորդ	**1,578,691**	**1,556,285**

Եկամուտներին վերաբերվող շնորհներ

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	**417,560**	**454,605**
Ներքին շարժ	-	9,508
Միացման արդյունքում փոխանցված եկամուտներին վերաբերվող շնորհներ	-	156,520
Ավելացումներ	1,559,895	1,632,920
Եկամտի ճանաչում	(1,542,242)	(1,493,207)
Վերադասակարգում ակտիվների	(134,462)	(161,667)
Շնորհի վերադարձ	(105,550)	(181,119)
Տարեվերջի մնացորդ	**195,201**	**417,560**

20. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ստացված կանխավճարներ	235,908	194,500
Առևտրային կրեդիտորական պարտքեր	11,581	6,713
Ընթացիկ հարկային պարտավորություններ	79	13,888
Ընթացիկ պարտավորություններ գույքահարկի գծով	339,204	217,453
Ընթացիկ պարտավորություններ աշխատավարձի գծով	169	398
Արձակուրդայինի գծով պահուստ	32,102	31,009
Այլ կրեդիտորական պարտքեր	4,258	1,957
Ընդամենը	**623,301**	**465,918**

21. Կապակցված կողմեր

Համաձայն «Փոխկապակցված կողմերի բացահայտում» ՀՀՄՍ 24-ի՝ կողմերը համարվում են փոխկապակցված, եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, փոխկապակցված կողմերը ներառում են Հիմնադրամի ղեկավարության անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպություններին, որոնք փոխկապակված են կամ համապատասխանորեն վերահսկվում են նրանց կողմից:

ա) Գործարքներ կապակցված կողմերի հետ
Հաշվետու տարում Հիմնադրամն իր փոխկապակցված կողմերի հետ գործարքներ չի իրականացրել:

բ) Գործարքներ ղեկավարության հետ
Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Աշխատավարձ և պարգևատրումներ	48,598	30,529

22. Կարևոր հաշվապահական գնահատումներ և ենթադրություններ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերվող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Անընդհատության սկզբունք

Հիմնադրամն իրականացնում է մշտական վերահսկողություն և կառավարում: Հիմնադրամի ղեկավարությունն ունի հիմնավորված ակնկալիք, որ կարող է շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի Հիմնադրամը շարունակում է որդեգրել անընդհատության սկզբունքն իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

23. Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ստորև:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ դասերի

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.
Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	**2024թ.**	**2023թ.**
Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով		
Առևտրային դեբիտորական պարտքեր	154,408	156,988
Դրամական միջոցներ	803,471	1,039,031
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**957,879**	**1,196,019**

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	**2024թ.**	**2023թ.**
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	11,581	6,713
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**11,581**	**6,713**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտարկում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

24. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի:
Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարքային ռիսկը , իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոնները
Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկն է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Հիմնադրամը ենթարկվում է Պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է դրամական միջոցների և դրանց համարժեքների, բանկերում տեղաբաշխված ավանդների գծով: Հիմնադրամի համար ընդունելի են միայն բարձր վարկանիշ ունեցող տեղական բանկերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի վերաբերյալ բացահայտումները, որոնք ո՛չ ժամկետանց են, ո՛չ էլ արժեզրկված, ներկայացված են:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով:

	2024թ. **հազ. դրամ**	**2023թ.** **հազ. դրամ**
Ակտիվներ՝		
Մնացորդներ բանկերում	797,563	1,032,502
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**797,563**	**1,032,502**

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2024թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, Հիմնադրամի բանկային հաշիվների մնացորդները կազմում են 797,563 հազ. դրամ, ինչը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին, այս ակտիվների հետ կապված: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են տասը խոշոր հայկական բանկերից մեկում և հիմնադրամը չի ակնկալում որ այդ բանկը չի կատարի իր պայմանագրային պարտականությունը: Հիմնադրամի գնահատմամբ բանկային հաշիվների մնացորդների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել, ինչը հիմնականում պայմանավորված է վերջինիս կարճաժամկետ բնույթով:

Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես արտարժույթային ռիսկի:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամի գործարքները իրականացվում են հայկական դրամով:
Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածություն կառաջանա Հիմնադրամի այն նվիրատվություններից , որոնք արտահայտված են արտարժույթով:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական վճարներից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:
Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ Հիմնադրամը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի ողջամիտ ժամկետում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

25. Պայմանական պարտավորություններ

Ֆինանսական երաշխիքներ

Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական երաշխիքներ չի ունեցել :

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում:

Իրավական պարտավորություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Հիմնադրամը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի վրա:

Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքերն էական չեն, դրանք չեն կարող ազդել ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կայացրած տնտեսական որոշումների վրա:

Ռազմական գործողություններ Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև

2022թ. փետրվարի 24-ին Ռուսաստանը ռազմական գործողություններ սկսեց Ուկրաինայի դեմ: Ռուսաստանին դիմագրավելու նպատակով ԵՄ-ն, ԱՄՆ-ը և աշխարհի շատ երկրներ տնտեսական և քաղաքական պատժամիջոցներ են հայտարարել և կիրառում, որի արդյունքում Ռուսաստանի տնտեսությունը նշանակալի խնդիրների առաջ է հայտնվել: Ներկայումս պատերազմի ընթացքը և պատժամիջոցների ազդեցության հետևանքների ծավալը անկանխատեսելի են:

Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության և ներդրումային դաշտի համար Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ազդեցությունը, ինչպես նաև այն, որ Հայաստանը ԵԱՏՄ կառույցի անդամ է, ստեղծված իրավիճակն անուղղակիորեն կարող է ազդել Հայաստանի ֆինանսական և տնտեսական համակարգերի կայունության վրա:

Մինչև այժմ շարունակվող գործողությունները հսկայական ազդեցություն ունեն ամբողջ աշխարհի ֆինանսական և ներդրումային դաշտի վրա, մասնավորապես՝ արտարժութային փոխարժեքների տատանումները և ստեղծված անորոշությունը կարող է ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վրա:

Հաշվի առնելով նշված հանգամանքների և նրանց ազդեցության անկանխատեսելիությունը՝ Հիմնադրամն այս պահին դժվարանում է գնահատել վերջինիս ազդեցությունն իր հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

Պատերազմական գործողություններ Հայաստանի Հանրապետության սահմանին

2022թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանը սկսեց լայնածավալ մարտական գործողություններ Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի ուղղությամբ: Սեպտեմբերի 16-ին ժամանակավոր հրադադար հայտարարելուց հետո պարբերաբար տեղի են ունենում հարձակումներ: Բանակցային գործընթացներն ընթացքի մեջ են, և Հիմնադրամն այս պահին դժվարանում է գնահատել վերջինիս ազդեցությունն իր հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

«Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան» հիմնադրամ

ՌԵԿՏՈՐ՝ **Հ. Զաքոյան**

Փորձագետ հաշվապահ՝ **Լ. Մովսիսյան**

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 14:25